ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 6 սեպտեմբերի 2006 թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի դատական կազմը

Նախագահությամբ՝ Վ. Պողոսյան
Անդամներ՝ Կ. Բալայան
Հ. Նազարյան

Քննության առնելով ՀՀ քաղաքացի Գեղամ Արիստակեսի Միրզոյանի 2006 թ. օգոստոսի 14-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը քննության ընդունելու հարցը

ՊԱՐԶԵՑ

1. Քաղ. Գ. Ա. Միրզոյանը դիմել է Սահմանադրական դատարան, վիճարկելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ եւ 280-րդ հոդվածների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին պարբերության եւ 31-րդ հոդվածի 1-ին, 2-րդ պարբերություններին:

2. Ներկայացված դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ եւ 5-րդ մասերի պահանջներին, քանի որ դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, առկա է դատարանի վերջնական ակտը, նշված են օրենքի այն դրույթները, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է եւ Սահմանադրության այն դրույթները, որոնց, դիմողի գնահատմամբ, հակասում են տվյալ օրենքի դրույթները, ինչպես նաեւ պահպանվել է Սահմանադրական դատարան դիմելու ժամկետը:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 6-րդ կետով Սահմանադրական դատարանի դատական կազմը

ՈՐՈՇԵՑ

1. Գ. Ա. Միրզոյանի դիմումը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 178 եւ 280 հոդվածների ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին պարբերության եւ 31-րդ հոդվածի 1-ին, 2-րդ պարբերությունների համապատասխանության վերաբերյալ, ընդունել քննության, կազմել գործ (թ. 6-12):
2. Որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովը:
3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 6-րդ մասի համաձայն դատական կազմի որոշումն ընդունվել է Սահմանադրական դատարանի անունից:

Նախագահող՝

Անդամներ՝

ՍԴԴԿՈ-

6 սեպտեմբերի 2006 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի Նախագահ
պարոն Գ. Հարությունյանին

Ղեկավարվելով ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26 հոդվածի 5-րդ կետով Ձեզ եմ ներկայացնում անհատական դիմումով գործը քննության ընդունելու 2-րդ դատական կազմի քվեարկության արդյունքները.

1. Դատական կազմը քննության առավ ՀՀ քաղաքացի Հովհաննես Մարտիրոսի Ռուշանյանի 2006թ. օգոստոսի 9-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումի /գործ 6-11/ հիման վրա գործը քննության ընդունելու հարցը: Դիմումով վիճարկվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218 հոդվածի 4-րդ կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 3-րդ, 34-րդ, 37-րդ հոդվածներին եւ 42-րդ հոդվածի 3-րդ կետին:

2. Քննարկման ընթացքում Վ. Պողոսյանը կարծիք հայտնեց, որ գործը, չնայած ոչ հստակ ձեւակերպումների կարող է ընդունվել քննության, իսկ դատական կազմի մյուս անդամները գտնում էին, որ դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները, ինչպես նաեւ դիմումում չեն պարունակվում նշված օրենսգրքի 218 հոդվածի 4-րդ կետի Սահմանադրությանը հակասելու որեւէ հիմնավորում, որոնք «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 69 հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերի պահանջն է,:

Դատական կազմի մյուս անդամները կարծում են, որ գործը կարելի է ընդունել քննության :

3. Դատական կազմը միաձայնությամբ որոշում չի ընդունել:

Դատական կազմի նախագահ՝ Վ. Պողոսյան

6 սեպտեմբերի 2006 թ.